

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԻՆ



ԹԻՎ 2


**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում
2020թ. հունվար-փետրվարին***

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնանկումը (2020թ. փետրվարը 2019թ. փետրվարի նկատմամբ) կազմել է 0.5%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.2%:

	Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱԱՀՆԴ) երկու նիշ մակարդակ	2020թ.						
		հունվարը ¹		փետրվարը		հունվար- փետրվարը 2019թ.	փետրվարը	
		2019թ. հուն- վարի նկատ- մամբ	2019թ. դեկտեմ- բերի նկատ- մամբ	2019թ. փետրվարի նկատ- մամբ	2020թ. հուն- վարի նկատ- մամբ		2019թ. դեկտեմ- բերի նկատ- մամբ	2015թ. նկատ- մամբ
տոկոսային փոփոխություն						ինդեքս		
00	Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	0.3	1.4	-0.5	-0.2	-0.1	101.2	105.2
01	աննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-1.7	3.1	-4.1	-0.8	-2.9	102.3	107.2
02	ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	5.0	0.4	9.1	4.3	7.0	104.7	110.4
03	հագուստ և կոշիկ	2.9	-1.6	3.5	-1.5	3.2	96.9	104.2
04	բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.9	0.1	1.2	-0.4	1.1	99.8	99.2
05	տնային գործածության առարկաներ, կենցա- ղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.3	-0.2	0.1	0.3	-0.1	100.1	92.6
06	առողջապահություն	1.9	0.1	2.1	1.1	2.0	101.2	110.0
07	տրանսպորտ	2.9	0.1	2.1	-0.8	2.5	99.2	106.1
08	կապ	-0.1	-0.1	-0.1	0.0	-0.1	99.9	98.2
09	հանգիստ և մշակույթ	-0.6	1.6	-1.6	-0.5	-1.1	101.1	107.1
10	կրթություն	3.7	0.0	3.7	0.0	3.7	100.0	112.1
11	ռեստորաններ և հյուրանոցներ	1.6	0.5	1.8	-0.2	1.7	100.3	107.9
12	տարբեր ապրանքներ և ծառայություններ	3.1	2.9	3.0	0.1	3.1	103.0	103.2

**Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր
ցուցանիշի վրա 2020թ. փետրվարին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)**

%




* Մույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2020թ. փետրվարի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում, կուտակային (աճողական)) տեղեկատվությունը գետեղվում է <<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում>> ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-301):

** Եվրոստատի կողմից սահմանված հղման ժամանակաշրջան:

¹ 2020թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկներում ներառված ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի և դրանց տեսակարար կշիռների վերանայմամբ պայմանավորված, վերահաշվարկվել են 2020թ. հունվարի գների ինդեքսները: Ինդեքսների վերանայման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումները ներկայացված են հավելված 2-ում:

Ենթահնդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. փետրվարին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

	2020թ.					
	հունվարը ¹		փետրվարը		հունվար-փետրվարը 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ	փետրվարը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ
	2019թ. հունվարի նկատմամբ	2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2019թ. փետրվարի նկատմամբ	2020թ. հունվարի նկատմամբ		
Սպառման ապրանքներ այդ թվում՝	-0.2	1.8	-1.4	-0.3	-0.8	101.6
անդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ)	-1.1	2.9	-2.9	-0.3	-2.0	102.6
ոչ սպարենային ապրանքներ	1.7	-0.3	1.9	-0.2	1.8	99.5
Ծառայություններ	1.4	0.6	1.4	-0.1	1.4	100.4
	տոկոսային փոփոխություն					ինդեքս

Սպառողական գների հավելվածը 2011-2020թթ. փետրվարին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Հանրապետության դիտարկվող 9 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական գները նվազել են 0.7-0.1%-ով (համեմատաբար բարձր գնանկում արձանագրվել է Վաղարշապատ և Իջևան քաղաքներում), իսկ 2-ում գրանցվել է 0.1% գնաճ: Մայրաքաղաքում սպառողական գների մակարդակը նվազել է 0.1%-ով:

Մենախառնուրդի գներ: 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 4.1%, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.8% գնանկում: Վերջինիս մեծապես նպաստել են կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի և մսամթերքի՝ համապատասխանաբար 4.4% և 1.1% գնանկումները:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 7.6%, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 4.4% գնանկում: Չվի գինը 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ նվազել է 25.9%-ով, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 18.3%-ով:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գները նվազել են 6.6-2.6%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Իջևանում: Մայրաքաղաքում կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գները նվազել են 3.7%-ով:

Մսամթերքի ապրանքախմբում 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ գրանցվել է 4.0%, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 1.1% գնանկում:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ մսամթերքի գները նվազել են 2.2-0.1%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Հրազդանում: Մայրաքաղաքում մսամթերքի գները նվազել են 1.3%-ով:


Ձկան և ծովամթերքի ապրանքախմբում 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ գրանցվել է 4.5%, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.4% գնանկում:

Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ ձկան և ծովամթերքի գները նվազել են 1.6-0.2%-ով (մայրաքաղաքում գրանցվել է 0.2% գնանկում), 2-ում արձանագրվել է 0.1-0.2% գնաճ, իսկ 2 քաղաքներում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Բանջարեղենի ապրանքախմբում² 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 12.9%, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.1% գնանկում:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-փետրվարին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %




² 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար և փետրվար ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ բանջարեղենի գները նվազել են 5.4-0.1%-ով, (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Իջևանում), իսկ 4-ում արձանագրվել է 0.2-2.5% գնաճ: Մայրաքաղաքում բանջարեղենի գներն աճել են 0.9%-ով:

Մրգի ապրանքախմբում² 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 2.1% գնանկում, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.1% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-փետրվարին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Հանրապետության դիտարկված 3 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ մրգի գներն աճել են 1.5-5.8%-ով (մայրաքաղաքում արձանագրվել է մրգի 1.5% գնաճ), իսկ 8-ում գրանցվել է 4.5-0.7% գնանկում:

2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում արձանագրվել է 13.2% գնանկում, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.3% գնաճ:

Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում գրանցվել է 0.3-1.4% գնաճ, 5-ում՝ 2.1-0.9% գնանկում, իսկ 2-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում շաքարի և շաքարավազի գներն աճել են 0.6%-ով:

2020թ. փետրվարին հունվարի համեմատ հացաբուլկեղենի և ձավարեղենի, յուղերի և ճարպերի, սուրճի, թեյի, կակաոյի ապրանքախմբերում արձանագրվել է 0.1%, ոչ ալկոհոլային խմիչքի՝ 0.2%, ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների 4.3% գնաճ (պայմանավորված ալկոհոլային խմիչքի 6.1% գնաճով):


Ոչ պարենային ապրանքների գներ: 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.9% գնաճ, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.2% գնանկում:

2020թ. փետրվարին հունվարի համեմատ տարբեր տեսակի կոշիկեղենի գները նվազել են 1.7%-ով, հագուստինը՝ 1.4%-ով, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի, ապակե ամանեղենի, ճաշասպի և տնային կահ-կարասու, կենցաղային և այգեգործական գործիքների, վառելանյութերի և քսանյութերի, գրասենյակային պարագաների գները՝ 0.2%-ով: Միաժամանակ, հանրապետությունում արձանագրվել է գորգերի և հատակի ծածկերի՝ 0.1%, կահույքի և կահավորանքի, մաքրող, լվացող միջոցների, ոսկերչական զարդերի՝ 0.2%, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի՝ 0.4%, խոշոր կենցաղային սարքերի՝ 1.1% գնաճ:

2020թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 0.9% և 1.5% գնանկում: 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ բենզինի գներն աճել են 0.8%-ով, իսկ դիզելային վառելիքի գծով արձանագրվել է 1.6% գնանկում, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է համապատասխանաբար 0.9% և 1.5% գնանկում:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2017-2020թթ.

2015թ. նկատմամբ



Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.7-0.1% գնանկում, մեկում՝ 0.2% գնաճ, իսկ մեկում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.2%-ով:

Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2020թ. փետրվարին 2019թ. փետրվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սակագների 1.4% հավելւած, իսկ 2020թ. հունվարի համեմատ՝ 0.1% նվազում:

2020թ. փետրվարին հունվարի համեմատ մարդաստար տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 2.2%-ով (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 11.6% նվազումով), հանգստի կազմակերպման համալիր ծառայություններինը՝ 2.0%-ով, հյուրանոցային ծառայություններինը՝ 0.8%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է բժշկական ծառայությունների՝ 2.1%, աղբի հավաքման ծառայությունների սակագների՝ 5.8% հավելւած (պայմանավորված որոշ մարզերում սակագների ավելացմամբ), իսկ կենցաղային սարքերի նորոգման, հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների, կրթության, կապի, սպասարկման ծառայությունների (ռեստորաններ, սրճարաններ և համանման կազմակերպություններ), վարսավիհանոցների և անձնական խնամքի սպասարկման սրահների, իրավաբանական ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում 2020թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է մատուցված ծառայությունների սակագների 0.5-0.3% նվազում (մայրաքաղաքում մատուցված ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 0.3%-ով), 5-ում արձանագրվել է 0.1-1.0% հավելւած, իսկ մեկում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Արտաբժույթի շուկա: 2020թ. փետրվարին հունվարի սպառողական և արտաբժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.2% և 0.1% նվազում (ՀՀ դրամն արժևորվել է): 2020թ. փետրվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.2% և 0.1% հավելւած: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 2.5% և 0.8% հավելւած: 2020թ. փետրվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 478.7 դրամ, ինչը 2.0%-ով ցածր է 2019թ. փետրվարի համապատասխան ցուցանիշից (488.4 դրամ):

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2020թ.			
	հունվարը		փետրվարը	
	2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2019թ. հունվարի նկատմամբ	2020թ. հունվարի նկատմամբ	2019թ. փետրվարի նկատմամբ
Միրգ, ընդամենը	8.9	-0.5	0.1	-2.1
<i>այդ թվում՝</i>				
Խնձոր	14.7	12.4	-2.3	11.8
Տանձ	13.2	-0.3	0.7	-2.5
Նուռ	19.3	4.8	6.4	-1.9
Խաղող	19.0	8.2	3.0	15.4
Ադամաթուզ (բանան)	10.5	0.6	2.8	-6.5
Նարինջ	-1.4	12.1	-2.7	9.1
Մանդարին	15.9	0.6	4.1	1.7
Կիտրոն	4.1	20.0	-0.3	18.9
Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը	15.1	-6.4	-0.1	-12.9
<i>այդ թվում՝</i>				
Կաղամբ	5.2	-28.2	-0.9	-35.9
Կանաչ սոխ	4.6	23.0	-15.6	5.4
Խառը կանաչեղեն	13.7	-8.4	3.1	-9.4
Լոլիկ	23.5	-2.4	4.2	-13.0
Վարունգ	42.2	-8.6	-9.6	-16.0
Սմբուկ	29.6	-1.1	12.8	0.5
Պղպեղ	26.1	-9.2	7.0	-17.5
Գազար	5.0	17.5	-2.0	2.9
Ճակնդեղ	8.3	23.7	-1.4	24.0
Գլուխ սոխ	1.1	2.9	-0.3	-11.8
Սխտոր	8.2	-8.1	8.2	-3.2
Սունկ	0.6	-5.4	-3.3	-7.7
Կարտոֆիլ	4.8	-8.8	3.2	-12.0

Հայաստանի Հանրապետությունում 2020թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի, տեսակարար կշիռների վերանայման և բազիսային ժամանակաշրջանի փոփոխության մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսաապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության դրամական ծախսումների մասին տվյալները, որի արդյունքում արձանագրվել են 2019 թվականի ՄԳԻ-ի զամբյուղի սպառման համամասնությունների համեմատ որոշակի փոփոխություններ, վերանայվել է 2020 թվականի ՄԳԻ-ի կազմը և կառուցվածքը: 2020 թվականի ՄԳԻ-ի հաշվարկման համար բազիսային ժամանակաշրջան է ընդունվել 2019 թվականի դեկտեմբեր ամիսը:

Համաձայն տնային տնտեսությունների կենսաապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության դրամական ծախսումների մասին տվյալների, կատարվել է ՄԳԻ-ի հաշվարկման համար ապրանք-ծառայությունների կազմի ընտրանք-արդիականացում. ընտրանքի ստորին մակարդակ է սահմանվել տնային տնտեսությունների կողմից իրականացված ընդհանուր դրամական ծախսումների ծավալում 0.001 տեսակարար կշիռը: Վերը նշված ընտրանքի արդյունքներով ՄԳԻ-ի զամբյուղի կազմը 450 անվանում ապրանքներից և ծառայություններից նվազեցվել է 23-ով և կազմել 427 անվանում, իսկ ապրանք-ծառայություն ներկայացուցիչների քանակը՝ շուրջ 8000: ՄԳԻ-ի զամբյուղում ընտրանքի համար ընդունված շեմից ցածր կշիռ են ունեցել 10 պարենային ապրանքներ, 10 ոչ պարենային ապրանքներ և 1 ծառայություն:

Առանձին ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռների փոփոխությունները 2020 թվականին 2019 թվականի համեմատ առաջ են բերել նաև խոշորացված ապրանքային (ծառայության) խմբերի տեսակարար կշիռների որոշակի տեղաշարժեր (տես՝ աղյուսակ1):

Կատարվել է ՀՀ հետազոտվող 10 բնակավայրերի (մարզերի) և Երևան քաղաքի տեսակարար կշիռների վերահաշվարկ, հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը, ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների մասին 2019 թվականի ցուցանիշները (տես՝ աղյուսակ2):

Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի, ինչպես նաև դրանց տեսակարար կշիռների վերանայմամբ և բազիսային ժամանակաշրջանի փոփոխմամբ պայմանավորված 2020թ. հունվարի գների ինդեքսները վերահաշվարկվել են:

ՀՀ սպառողական գների ինդեքսի խոշորագույն խմբերի տեսակարար կշիռները

%

	Շնդամներ	այդ թվում՝					Ծառայու- թյուններ
		Սպառման ապրանքներ	դրանցից			ոչ պա- րենային ապրանք- ներ	
			պարենա- յին ապրանք- ներ (ներառյալ ակոհո- լային խմիչք և ծխախոտ)	այդ թվում՝			
				պարե- նային ապ- րանքներ	ակոհոլա- յին խմիչք և ծխախոտ		
2019թ.	100.0	68.13	45.89	41.35	4.54	22.24	31.87
2020թ.	100.0	64.43	43.41	39.23	4.17	21.01	35.57
<i>Տեսակարար կշիռների տարբերությունը (տոկոսային կետ)</i>		-3.70	-2.48	-2.12	-0.37	-1.23	3.70

Սպառողական գների ինդեքսի տեսակարար կշիռներն ըստ բնակավայրերի

%

	2019թ.	2020թ.
ՀՀ, ընդամենը	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>		
Երևան	56.78	57.69
Գյումրի	5.36	5.25
Վանաձոր	4.70	4.48
Վաղարշապատ	5.73	5.72
Աշտարակ	2.68	2.64
Իջևան	2.91	2.90
Հրազդան	7.03	7.00
Եղեգնաձոր	1.12	1.08
Գավառ	4.56	4.50
Կապան	3.35	3.01
Արարատ	5.78	5.73

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

	2019թ. դեկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ	2020թ. հունվարը	
		2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2019թ. հունվարի նկատմամբ
Ավստրիա	101.8	99.3	102.2
Բելգիա	100.9	98.9	101.4
Բուլղարիա	103.1	100.5	103.4
Հունգարիա	104.1	100.9	104.7
Գերմանիա	101.5	99.2	101.6
Հունաստան	101.1	98.7	101.1
Դանիա	100.8	100.2	100.8
Իռլանդիա	101.1	99.3	101.1
Իսպանիա	100.8	98.6	101.1
Իտալիա	100.5	98.2	100.4
Կիպրոս	100.7	99.2	100.7
Լատվիա	102.1	100.3	102.2
Լիտվա	102.7	100.2	103.0
Լյուքսեմբուրգ	101.8	99.6	102.5
Մայթա	101.3	98.6	101.4
Նիդերլանդներ	102.8	98.7	101.7
Լեհաստան	103.0	100.7	103.8
Պորտուգալիա	100.4	99.2	100.8
Ռումինիա	104.0	100.7	103.9
Սլովակիա	103.2	101.3	103.2
Սլովենիա	102.0	99.5	102.3
Միացյալ Թագավորություն	101.3	99.7	101.8
Ֆինլանդիա	101.1	99.6	101.2
Ֆրանսիա	101.6	99.5	101.7
Խորվաթիա	101.3	99.9	101.8
Չեխիայի Հանրապետություն	103.2	101.6	103.8
Շվեդիա	101.7	98.7	101.5
Էստոնիա	101.8	99.4	101.6
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-28) ²	101.6	99.3	101.7
Հայաստան	100.7	101.3	100.2
Ռուսաստան	103.0	100.4	102.4
Բելառուս	104.7	100.9	104.7
Ուկրաինա	104.1	100.2	103.2
Ղազախստան	105.4	100.7	105.6
Ղրղզստան	103.1	100.6	103.2
Մոլդովա	107.5	100.6	106.85
Տաջիկստան	...	100.6	...
Վրաստան	107.0	100.7	106.4
Կանադա	102.2	100.3	102.4
Նորվեգիա	101.2	99.9	101.7
Բրազիլիա	104.3	100.2	104.2
Կորեայի Հանրապետություն	100.7	100.6	101.5
Չինաստան	104.5	101.4	105.4
ԱՄՆ	102.3	100.4	102.5
Թուրքիա	111.8	101.4	112.2
Շվեյցարիա	99.9	99.6	100.2
Ճապոնիա	100.8	99.9	100.7

... - Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2020թ. հունվարի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

² Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվար-մարտին» մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն «2020 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2020թ. ապրիլ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Մաս 3, էջ 132):